ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1310-Ա « 05 » ապրիլի 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊԱՀԱՆ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Սպահանի քաղաքապետարանի հրավերը՝ Իրանի Իսլամական Հանրապետության Սպահան քաղաքում կայանալիք «Սպահանի օրեր» և մանկապատանեկան նկարչության երրորդ միջազգային փառատոնի փակման միջոցառումներին մասնակցելու նպատակով, ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով.

1. Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2024 թվականի ապրիլի 26-ից 30-ը ներառյալ գործուղել ԻԻՀ Սպահան քաղաք հետևյալ կազմով.

Դավիթ Գևորգյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ
Տիգրան Աստվածատրյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության մշակույթի բաժնի առաջատար մասնագետ

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի միջոցների հաշվին՝ բացառությամբ գիշերավարձի, որը հոգում է հրավիրող կողմը:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դավիթ Գևորգյանի բացակայության ընթացքում արտաքին կապերի վարչության պետի պարտականությունները վերապահել արտաքին կապերի վարչության արարողակարգի բաժնի պետի ժ/պ Լուսինե Ղարիբյանին:

4. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ